ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2022 թվականի
հունիսի 30-ին

«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաստատագրված վճարների մասին» 1998 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-27 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածում՝

1) «իգ» կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ «իդ» կետ.

«իդ) սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված ցանկում ներառված գործունեության տեսակները:»:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասում «և «ժէ»» բառերը փոխարինել «, «ժէ» և «իդ»» բառերով:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերություն.

«Սույն օրենքի 7-րդ հոդվածի «իդ» կետով սահմանված գործունեության տեսակների իրականացման դեպքում վճարողները ելակետային տվյալի մասին հայտարարությունը ներկայացնում են իրենց հաշվառման վայրի հարկային մարմին յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, իսկ «Հարկերի մասին» օրենքի 20[1]-ին հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հայտարարագիր ներկայացրած անհատ ձեռնարկատերերը՝ յուրաքանչյուր կիսամյակի համար (եռամսյակային կտրվածքով)՝ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:»:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «վճարումը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված գործունեության տեսակների,» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մաս.

«1.1. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «իդ» կետով սահմանված գործունեության տեսակների համար հաստատագրված վճարի վճարումը կատարվում է վճարողի կողմից ինքնուրույնաբար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.4-րդ գլխով.

«Գ Լ ՈՒ Խ 17.4

ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «ԻԴ» ԿԵՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ

Հոդված 93.15. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «իդ» կետով սահմանված գործունեության տեսակներ իրականացնելու համար հաստատագրված վճար վճարողները

1. Վճարողներ են համարվում սույն օրենքի 7-րդ հոդվածի «իդ» կետով սահմանված ցանկում ներառված գործունեություն (գործունեություններ) իրականացնողները:

Հոդված 93.16. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «իդ» կետով սահմանված գործունեության տեսակներ իրականացնելու համար հաստատագրված վճարի չափը

1. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «իդ» կետով սահմանված գործունեության տեսակներ իրականացնելու համար հաստատագրված վճարի եռամսյակային չափը հաշվարկվում է ելակետային տվյալի 5 տոկոսի չափով՝ դրամական արտահայտությամբ:

Հոդված 93.17. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «իդ» կետով սահմանված գործունեության տեսակներ իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալը

1. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «իդ» կետով սահմանված գործունեության տեսակների համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալ է համարվում եռամսյակի ընթացքում սույն օրենքի 7-րդ հոդվածի «իդ» կետով սահմանված ցանկում ներառված գործունեության յուրաքանչյուր տեսակից ստացվող եկամուտները (իրացման շրջանառությունը):»:

Հոդված 6. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետում «ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնողների, ինչպես նաև խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղ կազմակերպողների համար» բառերը փոխարինել «ինչպես նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի «գ.1», «ժէ» և «իդ» կետերով սահմանված գործունեության տեսակներ իրականացնողների համար» բառերով:

Հոդված 7. Օրենքը լրացնել նոր հավելվածով՝ համաձայն հավելվածի:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
««Հաստատագրված վճարների մասին» օրենքում
փոփոխություններ և լրացումներ
կատարելու մասին» օրենքի

«Հավելված
«Հաստատագրված վճարների մասին» օրենքի

Ց Ա Ն Կ

«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «ԻԴ» ԿԵՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

1. Թարմ այլուրե հրուշակեղենի արտադրություն
2. Ըստ նախնական պատվերների պատվիրատուի՝ նախանշված վայրում հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեություն
3. Հանգստի կազմակերպման գործունեություն ատրակցիոններով այգիներում և զբոսայգիներում
4. Հրաձգարանների գործունեություն
5. Ինտերնետ ակումբների գործունեություն
6. Զբոսաշրջային գործակալությունների և զբոսաշրջային օպերատորների գործունեություն
7. Կինոֆիլմերի ցուցադրում
8. Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում*
9. Փաթեթավորման բնագավառում գործունեություն, բացառությամբ՝ շշալցման կամ տարալցման
10. Փաստաթղթերի լուսապատճենում և այլ տեսակի պատճենահանում
11. Լուսանկարչության բնագավառում գործունեություն
12. Գովազդային գործունեություն
13. Անշարժ գույքի գործակալություններ
14. Վարորդական դպրոցների գործունեություն
15. Համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային իրերի նորոգում, ծրագրային սպասարկում
16. Բանկային ավտոմատների և համանման համակարգչային տերմինալների (տվյալների ներանցման և արտածման սարք) սպասարկում
17. Կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում
18. Կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման պարագաների վարձույթ
19. Մանածագործական և մորթե արտադրատեսակների լվացում, մաքրում և չոր մաքրում
20. Թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներից արտադրատեսակների փորագրում

21. Արտադպրոցական դաստիարակություն մշակույթի բնագավառում
22. Իրավաբանական գործունեություն
23. Հաշվապահական գործունեություն
24. Թարգմանչական ծառայություններ
25. Անվտանգության համակարգերի գործառման ապահովում

* 8-րդ կետում չեն ներառվում առևտրի իրականացման վայրի կազմակերպման և հարսանիքների, հանդիսավոր միջոցառումների համար սրահների տրամադրման գործունեությունները:»: